ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածում «201-րդ հոդվածի 1-ին» բառերը փոխարինել «201-րդ հոդվածի 1-ին (բացառությամբ պետական սահմանը հատելիս հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի)» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 224.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 224.1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինները ձերբակալվածներին պահելու վայրերում քննում են սույն օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված՝ ձերբակալվածներին պահելու վայրերում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը և սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն վարչական իրավախատումների վերաբերյալ գործերը, որոնք հայտնաբերվել են պետական սահմանի անցման կետերում:

2. Սույն օրենգրքի 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու, վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի ձերբակալվածներին պահելու վայրի պետը:

3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտագության ծառայության անունից սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ստորաբաժանման պետը կամ սահմանային վերահսկողության ստորաբաժանման խմբի պետը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 44.1, 44.2, 47.14, 53, 95, 110.1, 110.2, 111, 123-123.4 (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով

նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 129.3, 131, 132, 134, 135.1, 135.2, 139, 140, 153, 160, 169.23, 172.2, 173, 173.2, 175, 177, 178, 178.1, 179.1, 180 (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181, 182.3, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183, 184, 186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8, 190-193, 195.1-196, 199, 200 հոդվածներով և ~~201-րդ հոդվածի 1-ին~~ 201-րդ հոդվածի 1-ին (բացառութամբ պետական սահմանը հատելիս թույլ տրված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի) և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:

(224-րդ հոդվածը փոփ. 25.06.86, 30.09.87, 10.03.90, 02.07.91, 02.09.93 ՀՕ-79, 14.06.94 ՀՕ-105, 03.12.96 ՀՕ-102, 24.12.04 ՀՕ-68-Ն, 24.11.04 ՀՕ-136-Ն, խմբ. 16.12.05 ՀՕ-26-Ն, փոփ. 16.12.05 ՀՕ-32-Ն, խմբ., փոփ. 21.02.07 ՀՕ-73-Ն, լրաց. 07.04.09 ՀՕ-89-Ն, փոփ. 18.05.09 ՀՕ-132-Ն, լրաց. 18.05.10 ՀՕ-65-Ն, 09.02.12 ՀՕ-7-Ն, փոփ. 27.02.12 ՀՕ-24-Ն, լրաց., փոփ. 19.03.12 ՀՕ-34-Ն, լրաց. 21.03.12 ՀՕ-107-Ն, լրաց., փոփ. 30.11.11 ՀՕ-289-Ն, խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն, լրաց. 19.12.12 ՀՕ-247-Ն, փոփ. 19.06.13 ՀՕ-94-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-101-Ն, փոփ. 20.11.14 ՀՕ-173-Ն, 21.12.15 ՀՕ-178-Ն, 01.03.17 ՀՕ-49-Ն, լրաց. 17.11.17 ՀՕ-204-Ն, 21.12.17 ՀՕ-11-Ն, 22.05.18 ՀՕ-331-Ն, 13.12.17 ՀՕ-324-Ն, փոփ. 11.09.18 ՀՕ-381-Ն, լրաց., խմբ. 09.12.19 ՀՕ-300-Ն, լրաց. 04.09.20 ՀՕ-405-Ն, 09.10.20 ՀՕ-456-Ն, 20.01.21 ՀՕ-59-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-268-Ն)

~~**Հոդված 224.1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը**~~

~~Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմիններում ձերբակալվածներին պահելու վայրերում քննում են սույն օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված՝ ձերբակալվածներին պահելու վայրերում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:~~

~~Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու, վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի ձերբակալվածներին պահելու վայրերի պետը:~~

(224.1-ին հոդվածը լրաց. 01.03.17 ՀՕ-49-Ն)

Հոդված 224.1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինները ձերբակալվածներին պահելու վայրերում քննում են սույն օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված՝ ձերբակալվածներին պահելու վայրերում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը և սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն վարչական իրավախատումների վերաբերյալ գործերը, որոնք հայտնաբերվել են պետական սահմանի անցման կետերում:

2. Սույն օրենգրքի 186-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու, վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի ձերբակալվածներին պահելու վայրի պետը:

3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտագության ծառայության անունից սույն օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ստորաբաժանման պետը և սահմանային վերահսկողության ստորաբաժանման խմբի պետը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[1]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-217[2]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[3]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[4]-28.03.2022-ՏՀ-011/1), ««ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[5]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[6]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[7]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1), ««ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[8]-28.03.2022,18.05.2022-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
«Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածում անհրաժեշտ է հստակ նշել, թե «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, որ	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի կարգավորումը լրացվել է «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 5-րդ	Ընդունվել է:

			պարբերությունից հետո է նախատեսվում լրացնել Նախագծի հիշյալ հոդվածով նախատեսվող կարգավորումը:	հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունից հետո:	
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդված**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող օրենքի 12.1-ին հոդվածի 4-րդ մասը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ «4. Սույն հոդվածով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:»:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 12.1-ին հոդվածի 4-րդ մասը խմբագրվել է:	Ընդունվել է:
«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Նախագծի հոդվածների մասերի և դրանց համապատասխան կետերի համարակալումն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:	Ընդունվել է: Նախագծի համարակալումը խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս**	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 1.1-ին մասում «նախատեսված» բառից հետո առաջարկում ենք լրացնել «սահմանային» բառը՝ համապատասխանեցնելով Օրենքի 13-րդ հոդվածի վերնագրի բովանդակությանը: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 1.1-ին մասում «նախատեսված» բառից հետո լրացվել է «սահմանային» բառը: Նույն դիտողության շրջանակներում խմբագրվել է նաև Նախագծի 6-րդ	Ընդունվել է:

			հոդվածի 1-ին մասի դրույթներից: Նույն դիտողության համատեքստում՝ անհրաժեշտ է խմբագրել նաև Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 5-րդ մասը:	հոդվածով լրացվող 5-րդ մասը:	
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մաս**	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող կարգավորման ինկորպորացման արդյունքում բովանդակային անհամապատասխանությունից խուսափելու նպատակով՝ Նախագծի հիշյալ մասում ««Հսկիչ կետում» բառերը հանել» բառերն առաջարկում ենք փոխարինել ««Հսկիչ կետում ներմուծվող» բառերը փոխարինել «Ներմուծվող» բառով» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում ««Հսկիչ կետում» բառերը հանել» բառերը փոխարինվել են ««Հսկիչ կետում ներմուծվող» բառերը փոխարինել «Ներմուծվող» բառով» բառերով:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումն առաջարկում ենք վերանայել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում՝ անհրաժեշտ է բացառել «կամ» շաղկապի կիրառումը:	Ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ «կամ» շաղկապի փոխարեն լրացվել է «և» շաղկապը:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**10-րդ հոդված**	**Նախագծի** 10-րդ հոդվածի 2-րդ մասում «կողմից կարգի սահմանումը» բառերն առաջարկում ենք փոխարինել «որոշման ընդունումը» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «կողմից կարգի սահմանումը» բառերը փոխարինվել են «որոշման ընդունումը» բառերով:	Ընդունվել է:
«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «օրենքում» և «Ավտոմոբիլային տրասնպորտի մասին» օրենքի 27-րդ հոդվածի» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «օրենքում» և «Ավտոմոբիլային տրասնպորտի մասին» օրենքի 27-րդ հոդվածի» բառերը:	Ընդունվել է:

«Պետական սահմանի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող կարգավորումն անհրաժեշտ է վերանայել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում՝ անհրաժեշտ է բացառել «կամ» շաղկապի կիրառումը, հստակ սահմանելով՝ պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողնումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անցման կետերով իրականացվում են սահմանապահ զորքերի զինծառայողների թե մաքսային մարմինների կողմից:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ «կամ» շաղկապի փոխարեն լրացվել է «և» շաղկապը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ «7. Սահմանային վերահսկողության եւ մաքսային հսկողության աշխատանքները կարող են կազմակերպվել համատեղ: Սույն մասով նախատեսված աշխատանքների համատեղ կազմակերպմանն առնչվող առանձին հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը խմբագրվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ «2. Պետական սահմանի անցման կետերում մինչեւ սույն օրենքի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 14-րդ հոդվածի 6-րդ մասով	Ընդունվել է: Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է:	Ընդունվել է:

			նախատեսված այլ պետական մարմինների տեղակայման կարգ, ժամկետներ եւ առանձին դեպքեր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանումը իր իրավասության սահմաններում վերահսկողությունն իրականացնում է Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը:»:		
«Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**««Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծ**	««Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հիշյալ օրենքն ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հունվարի 1-ից: 16.12.21 ՀՕ-413-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխությամբ նույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի 6-ից: Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներից, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը՝ ««Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծն անհրաժեշտ է խմբագրել և վերաշարադրել՝ ուժը կորցրած ճանաչելու փոխարեն՝ չեղյալ ճանաչելով ««Պետական սահմանի մասին» օրենքում	Ընդունվել է: Նախագիծը վերաշարադրվել է՝ ուժը կորցրած ճանաչելու փոխարեն՝ չեղյալ է ճանաչվել ««Պետական սահմանի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի փետրվարի 11-ի ՀՕ-75-Ն օրենքը»:	Ընդունվել է:

			լրացումներ կատարելու մասին» օրենքը:		
«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Նախագծի հոդվածների մասերի համարակալումն առաջարկում ենք խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով:	Ընդունվել է: Նախագծի համարակալումը խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում առաջարկում ենք «իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը» բառերը փոխարինել «իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 15-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասում «իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը» բառերը փոխարինվել են «իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ» բառերով:	Ընդունվել է:
«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծում «կարող է» հայեցողական ձևակերպման կիրառումը բացառելու նպատակով՝ Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 9.1-ին հոդվածի 3-րդ մասն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:»:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 9.1-ին հոդվածի 3-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ նախատեսելով, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:	Ընդունվել է:

«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծում «կարող է» հայեցողական ձևակերպման կիրառումը բացառելու նպատակով՝ Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7-րդ մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:»:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 7-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ նախատեսելով, որ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործառույթի իրականացմանն առնչվող առանձին հարցեր կարող են կարգավորվել Կառավարության որոշմամբ:	Ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	ՀՀ կառավարություն	**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 224-րդ և 224.1-րդ հոդվածներ**	Նախագծերի փաթեթով պետական սահմանի անցման կետերում սահմանային հսկողությունն իրականացվելու է նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից, հետևաբար առաջարկվում է համապատասխան փոփոխություն և լրացում կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ նախատեսելով, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության մարմինները քննում են օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն վարչական իրավախատումների վերաբերյալ գործերը, որոնք հայտնաբերվել են պետական սահմանի անցման կետերում:	Ընդունվել է: Նախագծերի փաթեթը լրացվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով:	Ընդունվել է: